ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022-2023 ուստարվա

Կրթական համակարգում հայագիտական առարկաները՝ հայոց լեզուն, հայ գրականությունը, հայոց պատմությունը, ՀԵՊ-ը, առանձնահատուկ տեղ ունեն մի կողմից որպես աշխարհաճանաչողության, մասնավորապես ազգային ինքնաճանաչման, անձի զարգացման, նրա մտավոր առաջընթացի, պատկերավոր մտածողության, հոգեվերլուծության զարգացման, մյուս կողմից՝ իբրև ուսումնական մյուս առարկաների ընկալման, յուրացման և արժևորման նախադրյալ: Իրականացնելով ուսումնական գործընթացը առարկայական ծրագրերի, ներկայացվող պահանջներին համապատասխան՝ հայագիտական առարկաներ դասավանդող ուսուցիչը միաժամանակ առաքելություն ունի սովորողների մեջ ամրակայելու մշակույթի, մասնավորապես՝ ազգային մշակույթի նկատմամբ գնահատողական վերաբերմունք, այն արժևորելու ունակություն և պահպանելու մղում: Ելնելով վերոնշյալից՝ 2022-2023 ուստարվա սկզբին հայերենագիտության մեթոդմիավորումը մշակել և իրականացրել է ինչպես ներդպրոցական, այնպես էլ արտադպրոցական կրթադաստիարակչական բազմաբովանդակ ծրագրեր: 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպվել է նպատակային՝ տարեսկզբին պլանավորելով ուստարվա ընթացքում տարվելիք ուսումնական աշխատանքները: Ըստ այդմ՝ առաջնորդվելով նախնական և ընթացիկ պլանավորումներով՝ մեթոդմիավորումն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Հայերենագիտական ՄՄ անդամների կողմից 2022-2023 ուստարվա ընթացքում կիրառվել են դասավարումների հետևյալ ձևերը:

*1.**Տեսանյութերի, ֆիլմերի, սահիկաշարերի դիտում-քննարկումներ, բանավեճերի անցկացում***
ուսուցիչներ՝ Ա. Հարությունյանի, Կ. Զիլֆիմյանի, Ն. Թադևոսյանի, Լաուրա Գրքիկյանի, Մ. Մացոյանի, Մ. Ալեքսանյանի կողմից:

*2. **Բաց դասեր.***

- *«Արտաշես Ա Բարեպաշտ» թեման՝ «Աշխարհացույց» կայքով, 10-րդ Դ դասարան, «Հայդուկային շարժում», 11-րդ Դ դասարան, «Քրիստոնեության հռչակումը պետական կրոն» և «Հելլենիզմը և Հայաստանը» թեմաներով 10-րդ Դ դասարան (ուսուցիչ՝ Լաուրա Գրքիկյան):*
- *«Հոմանիշներ և հականիշներ», 10-րդ Ա դասարան (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան):*
- *Հ. Թումանյան-154՝ 12-րդ Ա դասարան, Դ. Դեմիրճյան, «Վարդանանք»՝ դաս-դատավարություն, 11-րդ Բ դասարան ««Գևորգ Մարզպետունի» վեպի համակողմանի քննություն», 10-րդ Դ դասարան (ուսուցիչ՝ Լ. Գրքիկյան):*
- *Հ. Քաջազնունի-156, 11-րդ դասարաններ (ուսուցիչ՝ Ս. Կիրակոսյան):*

*3.**Արտադպրոցական դասեր, ճանաչողական էքսկուրսիաներ.***

- *«Պատերազմի հայ հերոսներն ու զորամիավորումները» թեմայով դաս Մայր Հայաստան հուշահամալիրում, 12-րդ դասարան (ուսուցիչ՝ Լաուրա Գրքիկյան):*
- *Ճանաչողական էքսկուրսիաներ Էրեբունի, Շենգավիթ, Կարմիր բլուր հնավայրերում, 10-րդ Դ դասարան, Էջմիածին՝ Կաթողիկե, Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ, Խոր Վիրապ, և Նորավանք, 10-րդ Դ դասարան, (ուսուցիչ՝ Լաուրա Գրքիկյան):*
- *«Շիրազի հայրենասիրական քնարը» թեմայով դաս Պատվո բլուրում (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան),*
- *Ճանաչողական էքսկուրսիա Երևանում՝ Արվեստի և գրականության, Էրեբունի թանգարաններում, Արին բերդ և Արուճի հնավայրեր, 10-րդ Ա դասարան, (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան),*

- *«Հ. Շիրազ» թեմայով դաս Շիրազի տուն-թանգարանում, 12-րդ դասարաններ (ուսուցիչ՝ Լալա Գրքիկյան):*
- *Ճանաչողական էքսկուրսիա Հաղարծինում, Գոշավանքում 11-րդ դասարան (ուսուցիչ՝ Մ. Ալեքսանյան):*
- *Այցելություն «Հայուհի» թանգարան, 10-րդ դասարաններ (ուսուցիչ՝ Ա. Հարությունյան):*
- *«Իմ Թումանյանը» թեմայով դաս Դսեղ գյուղում, 10-րդ դասարան (ուսուցիչ՝ Ն. Թադևոսյան):*
- *Զրույց Արմեն սարկավագ Իսահակյանի հետ Յոթվերք եկեղեցիում , 10-րդ դասարան (ուսուցիչ՝ Ս. Կիրակոսյան):*
- *«Ռազմամասնագիտական կողմնորոշում և պարտադիր ժամկետային ծառայություն» թեմայով հանդիպում N զորամասի հրամանատարական սպայակազմի հետ, 12-րդ դասարան (ուսուցիչ՝ Մ. Մացոյան):*
- *«Ապրիլյան քառօրյա պատերազմ» թեմայով դաս գնդապետ Ա. Առաքելյանի անվան պուրակում, 11-րդ Դ դասարան:*

4. Նախագծային աշխատանքներ.

- *«Ձիեր» ընդհանուր թեմայով հայոց լեզվից, ազգագրությունից և հայոց պատմությունից ուսուցիչներ՝ Կարինե Ջիլֆիմյանի, Լալա Գրքիկյանի, Մանե Ալեքսանյանի ղեկավարմամբ 10 և 11-րդ դասարանների աշակերտների հետ:*
- *«Մի լուսանկարի պատմություն», «Իմ ընտանիքի պատմությունը» թեմաներով՝ ուսուցիչ Լաուրա Գրքիկյանի ղեկավարմամբ 10 և 11-րդ դասարանների աշակերտների հետ:*
- *«Գյումրի քաղաքի վահանակների լեզուն» թեմայով՝ ուսուցիչ Լալա Գրքիկյանի ղեկվարմամբ 10-րդ դասարանի աշակերտների հետ:*
- *«Անցյալը ներկայում. Ալեքսանդրապոլ, ճարտարապետական ժառանգությունը» թեմայով՝ ուսուցիչ՝ Կարինե Ջիլֆիմյանի ղեկավարմամբ 10-րդ դասարանի աշակերտների հետ:*
- *«Կարմիր ավետարանի հետքերով» թեմայով, ուսուցիչ՝ Մարիանա Մացոյանի ղեկավարմամբ 10-րդ դասարանի աշակերտի հետ:*

5. ***Մասնակցություն գիտաժողովներին, գիտամանկավարժական նախաձեռնություններին.***

ա) Մասնակցություն «Երբ բացում եմ Աստվածաշունչը» աշակերտական համաժողովին Վաղարշապատում, մասնակից՝10, 11, 12-րդ դասարանների աշակերտուհիներ.

- *«Պահք. խորհուրդը, եկեղեցական և ժողովրդական ծիսական դրսևորումները», աշակերտ՝ Ոսկանյան Ս., ուսուցիչ՝ Կ. Ջիլֆիմյան,*
- *Ն. Շնորհալու «Հիսուս որդի» պոեմը, աշակերտներ՝ Բախչինյան Ա., Մարգարյան Օ., Զարիֆյան Ա, ուսուցիչ՝ Լ. Գրքիկյան,*
- *«Հավատք: Ի՞նչ է հավատքը: Ինչու՞ հավատալ», աշակերտ՝ Մխիթարյան Ն. ուսուցիչ՝ Ս. Կիրակոսյան,*
- *«Հայ հոգևոր երաժշտության առանձնահատկությունները», աշակերտներ՝ Թարբոշյան Հ., Հակոբյան Թ., Քալաշյան Մ., ուսուցիչ՝Մ. Ալեքսանյան:*

բ) Մասնակցություն «Հայաստանը և հայկականը» աշակերտական համաժողովին Գյումրու թիվ 1 ավագ դպրոցում.

- *Ուսուցիչ՝ Կարինե Ջիլֆիմյան, «Շեքսպիրյան առաջին հիշատակումները հայ իրականության մեջ» թեմայով՝ Լ. Գալստյան Ն. Նախշիկյան (XI դաս.), «Վտանգված եկեղեցական ժառանգություն» թեմայով՝ Ա. Զարխիֆալաքյան, Լ. Մինասյան (XI դաս.), «Հայկական տարազի ծիսագործառութային նշանակության լեզվական արտահայտումները» թեմայով՝Մ. Կարապետյան (X դաս.):*

- *Ուսուցիչ՝ Ալվարդ Հարությունյան, «Հայ իրավունքի ծագումն ու զարգացումը» թեմայով՝ Ս. Ոսկանյան (XI դաս.):*
- *Ուսուցիչ՝ Շուշիկ Գասպարյան, «Հայոց թագավորությունների անկման պատճառները» թեմայով՝ Լ. Մանուկյան, Ի. Տաբակյան, Ք. Խաչատրյան, Ա. Նավասարդյան, Է. Հարությունյան (X դաս.):*
- *Ուսուցիչ՝ Սաթենիկ Կիրակոսյան, « Եղեսիայի թագավորության ծագումը» թեմայով՝ Լ. Աթոյան (XI դաս.):*
- *Ուսուցիչ՝Լաուրա Գրքիկյան, «Վարդապետ Մոմիկ» թեմայով՝Մ. Քալաշյան (XI դաս.):*
- *Ուսուցիչ՝ Լալա Գրքիկյան, «Օտարազգի հայագետներ» թեմայով՝ Ջ.Թորոյան (X դաս.), «Գրապայքար. գրապայքարն արևելահայերի կյանքում» թեմայով՝ Տ. Գյոզալյան, Օ. Մարգարյան (X դաս.), «Բարբառները և հին հայերենի խոսակցական հիմքը» թեմայով՝ Ա.Ալեքսանյան, Ա.Բարսեղյան (X դաս.),*
- *Ուսուցիչ՝ Մելքոնյան Լուսինե,«Կանանց դերը ռազմարվեստում» թեմայով՝Շ.Աթոյան (XI դաս.):*

գ) Երևանի «Գլոբալ Բրիջ» դպրոցում «Մանկավարժական մտքի փառատոն»-ին ուսուցիչներ Կ. Զիլֆիմյանը, Լալա Գրքիկյանը, Լաուրա Գրքիկյանը, Մ. Ալեքսանյանը ներկայացրին իրենց անհատական նախագծերը:

*5. **Մրցույթներ.***

- *«Բանավեճի ակումբի» մասնակցությունը բանավեճի մրցաշարում. հաղթող է ճանաչվել 2 բանավեճի արդյունքում, 10 և 11-րդ դասարաններ (ուսուցիչ՝ Ալվարդ Հարությունյան):*
- *Եվրոպական միության կողմից հայտարարված «Շրջանակային տնտեսագիտությունը և աղջիկները» 8 ենթամրցույթներում (ուսուցիչ՝ Ալվարդ Հարությունյան):*
- *«Ես քո զինվորն եմ, հայրենի՛ք» շարադրությունների հանրապետական մրցույթում՝առաջին մրցանակ (ուսուցիչ՝ Ն. Թադևոսյան):*

6. SS դասերի անցկացում և տեսանյութերի պատրաստում.
ա) տեսանյութերի պատրաստում.

- *«Արվեստի ճյուղերը և ուղղությունները» թեմայով տեսանյութ (ուսուցիչ՝ Ա. Հարությունյան):*
- *«Զիու առասպելաբանական պատկերացումները և պաշտամունքային դրսևորումները» տեսանյութ (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան):*
- *«Գյումրու ֆայտոնը» տեսանյութ (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան):*
- *«Անցյալը ներկայում. Ալեքսանդրապոլ. Ճարտարապետական ժառանգություն» թեմայով տեսանյութ (ուսուցիչ՝ Կ. Զիլֆիմյան):*
- *«Անաղարտ պահենք մեր մայրենին» մրցույթի շրջանակներում 10 տեսադաս (ուսուցիչ՝ Ն. Թադևոսյան):*
- *«Կարմիր ավետարանի հետքերով» թեմայով տեսանյութ (ուսուցիչ՝ Մ. Մացոյան):*

բ) SS դասեր են անցկացվել ՄՄ բոլոր անդամների կողմից: SS դասերի շրջանակում տարբեր թեմաներով ռեպորտաժների պատրաստում 10-րդ Ա և Գ դասարաններում (ուսուցիչ՝ Կարինե Զիլֆիմյան):

*7. **Մանկավարժական զեկուցումներ, սեմինարներ, մասնագիտական զարգացում.***
ա) Հայերենագիտության ՄՄ նիստերի ժամանակ գիտական և մանկավարժական զեկուցումներ են ներկայացվել ուսուցիչներ Կարինե Զիլֆիմյանի, Լաուրա Գրքիկյանի, Սաթենիկ Կիրակոսյանի, Շուշիկ Գասպարյանի, Լալա Գրքիկյանի կողմից:
Սեմինարներ են անցկացվել
բ) Լաուրա Գրքիկյանի կողմից՝«Զևավորող գնահատում» թեմայով (համադպրոցական սեմինար),

գ) Ալվարդ Հարությունյանը՝ «Ինտեգրված ուսուցման ձևերը և նախագծային աշխատանքի կազմակերպումը» թեմայով սեմինարի վարում:
դ) Այլ ՄՄ հետ համագործակցության շրջանակում Հայերենագիտության ՄՄ անդամների համար՝ Լիլիթ Աբաջյանի կողմից՝ ««Ջոյտեկա» գործիքի ուսումնասիրում» թեմայով:
ե) Մասնագիտական զարգացման շրջանակներում ուսուցման տարբեր մեթոդներ ու մեթոդական հնարներ են ներկայացվել ուսուցիչներ Ալվարդ Հարությունյանի, Կարինե Զիլֆիմյանի, Լաուրա Գրքիկյանի, Մանե Ալեքսանյանի կողմից:

8.Օլիմպիադա. *10-12-րդ դասարանի աշակերտները մասնակցել են ներդպրոցական, տարածքային օլիպիադաներին հայոց լեզու, գրականություն, հայոց պատմություն առարկաներից:*

9. *Անցկացվել է* ***ստուգատես*** *հայոց լեզվից հայտորոշիչ և ամփոփիչ թեստերի միջոցով բոլոր 10-րդ դասարաններում: Կատարվել է համեմատական վերլուծություն:*

10. *Կատարվել են փոխադարձ* ***դասալսումներ*** *և քննարկումներ ՄՄ անդամների կողմից:*

Մեթեդմիավորան նախագահ՝ Կարինե Զիլֆիմյան